ԼՐԱՏՈՒ

ԴՎԻՆԻ 1981—1982 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դվինի պեղումների հիմնական նպատակը եղել է շարունակել քաղաքի շերտագրական պատկերի հիմնավորումը, լուծել քաղաքաշինության հետ կապված առանձին պրոբլեմներ, ճշգրտումներ մտցնել նյութերի թվագրության մեջ, կատարել սոցիալական հարցերի և արհեստագործության հետ կապված մեկնություններ։ Բացի այդ, շատ կարևոր հետևություններ են արվել հելլենիստական շրջանի բնակավայրի և քաղաքի վաղ միջնադարյան շրջանի մշակույթի տարբեր հարցերի վերաբերյալ։ Դվինում աշխատանքները տարվել են կենտրոնական թաղամասում և միջնաբերդում։



Նկ. 1։

Կենտրոնական թաղամասում պեղումները կատարվել են V—VI դդ. կաթողիկոսական պալատի արևմտյան և հարավային թևերում։ Պալատի սյունազարդ դահլիճին կից, արևմտյան հատվածում, դեռ 1980 թ. բացվել էր VI դարով թվագրվող կրակապաշտական փոքր տաճար՝ ատրուշանի մնացորդներով և ճարտարապետական մանրամասներով[1]։ Նմանատիպ տաճար Հայաստանում առաջին անգամ էր հանդիպում, ուստի այդ հուշարձանի նկատմամբ ուշադրությունը մեծ էր, և արշավախումբը նպատակ էր հետապնդում ամբողջացնել հատվածի պեղումները։ Ընդհանրապես, սասանյան տաճարները ավանդաբար կառուցվում էին միաձև հատակագծով։ Դրանց արտաքին ու ներքին հարդարանքը բավականին զուսպ էր և հասարակ։ Տաճարների հիմնական շինությունը գմբեթավոր սրահ-դահլիճն էր՝ խորը խորշով, որտեղ քարե կամ աղյուսե ատրուշանի վրա վառվում էր սրբազան կրակը։ Դահլիճը հասա պատերով առանձնացված էր մյուս հատվածներից։ Գմբեթը հենվում էր չորս սյուների վրա[2]։ Ըստ երևույթին, Դվինում առայժմ բացվել է միայն գմբեթավոր սրահը, որից պահպանվել է կենտրոնական ատրուշանը և թաղակիր սյուների խարխխներից մեկը (նկ. 1)։ Դժվար է ասել՝ արդյո՞ք պալատի հարավ-արևմտյան հատվածի պատի որմնախարիսխները որևէ կապ ունեն ատրուշանի հետ։ Դա կապված է հետագա ուսումնասիրությունների հետ։ Տաճարի տարածքում հում աղյուսից կառուցված

[1] Ա. Ա. Քալանթարյան, Դվինի 1980 թ. պեղումների հիմնական արդյունքները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1982, № 12, էջ 87—94)։

[2] Р. Фрай, Наследие Ирана, М., 1972, с. 324—325; Е. А. Дорошенко, Зороастрийцы в Иране, М., 1982, с. 32.

(VIII—IX դդ.) շինությունը մեծ վնաս է հասցրել 572 թ. ապստամբության ժամանակ տեղանց այն էլ հիմնովին ավերված ատրուշանին։ Տաճարի պեղումները դեռ ընթացքի մեջ են, և հետագա տարիներին, վերին շերտերը հեռացնելուց հետո, նրա հատակագծային պատկերը ավելի կամրողջացվի։ Այս նույն հատվածում, մոտ 2 մ խորության վրա, բացվում է տուֆի տաշվածքից առաշացած խճի շերտ, որը ենթադրել է տալիս ինչ-որ մոնումենտալ կառույցի առկայություն մոտակայքում, որը պետք է կառուցված լիներ VII դարում։

Հատակագծային խառը վիճակ է ստեղծվել պալատի հարավային մասում. հարավային կից սենյակները, որոնց մի մասը բացվել էր նախորդ տարիներին[3], որոշ վերափոխությունների հետքեր են կրում, նկատվում են զույգ հատակներ։ Ծայր արևմտյան սենյակներում կան ճեղքված ավազաքարից հիմքեր, որոնք նախորդել են պալատին։

Սյունազարդ դահլիճի հարավային պատը արտաքուստ տեղ-տեղ քանդվել է՝ մի մասը VII դ. սկզբում, երբ այստեղ արդեն ապակեգործական արհեստանոց էր[4], իսկ մյուս մասը՝ IX դարում։ Բացված սենյակաշարը հետագայում կառուցապատվել է. հայտնի են մոտ երեք հատակ, որոնցից ամենավերևինը շարված է թրծած աղյուսներով և ավերվել է IX դ. վերջում, երկրաշարժի ժամանակ։ Որոշ մանրամասներ, ինչպես կլոր օշախները, աղյուսաշար բերանով հորերը, ենթադրել են տալիս այստեղ արտադրական համալիրի գոյության մասին։ IX դ. շինությունները նույնպես աղյուսաշեն են, տեղում պահպանվել են տարբեր խարիսխներ, որոնցից մի մասն իրենց ձևով վաղ միջնադարյան են և կրկնակի օգտագործված։

Ավելի ուշ շրջանի կառույցները ավերվել են XV—XVII դդ. խիտ թաղումների հետևանքով։ Այդ գերեզմանները հիմնականում պատրաստվել են թրծած աղյուսներով և ծածկվել սալերով։ Ինչպես կանոն գերեզմաններում հնագիտական իրերը բացակայում են, սակայն երբեմն հանդիպում են մետաղից անշուք զարդեր (ապարանջան, ականջօղ, մատանի)։ Հիշարժան է գերեզմաններից մեկը, որի արևմտյան մասում կառուցվել էր աղյուսաշար հատակով փոքրիկ հրապարակ։ Պեղված հատվածում վաղ միջնադարյան հնագիտական նյութերը սակավ են հանդիպում։ Իհարկե, դա բացատրվում է առաջին հերթին պալատական շինության ֆունկցիոնալ նշանակությամբ։ Պալատի բնակելի և տնտեսական սենյակները, որտեղ առարկաները ավելի առատ կարող են հանդիպել, գրեթե պեղված չեն։

Ինչպես միշտ, հարուստ են ներկայացված IX դարի արհեստային արտադրանքի նմուշները։ Այդ ժողովածուներում զգալի թիվ է կազմում ապակին՝ բազմազան անոթներով և ղամպարներով (աղ. I, 1, 2, 4—8)։ Ապակիների այսպիսի առատությունը ենթադրել է տալիս, որ կաթողիկեին կից կառուցվել են կաթողիկոսարանը սպասարկող շինություններ, ուր պահպանվում էր նաև եկեղեցական սպասքի մի մասը, այդ թվում և՝ ապակեղենը։ Գտնված ապակիների մեջ հատկապես հիշատակելի են արաբատառ արձանագրությամբ գունազարդ անոթները, ալամբիկը և տաշված ըլթակներով հաստապատ բաժակը (աղ. I, 2, 6)։ Վերջինս պատրաստված է վաղ միջնադարյան նման տեխնիկայի ավանդական հնարներով։ Այդ անոթների մի մասը, հատկապես գեղարվեստական ապակին, ներմուծված է մերձավորարևելյան կենտրոններից։ Հայտնի է, որ Դվինը հոգևոր, մշակութային և առևտրական սերտ կապերի մեջ էր խալիֆաթի կենտրոնների հետ։ Հայ և արաբ վաճառականները այլ ապրանքների հետ Դվին էին ներմուծում նաև ապակու հիանալի նմուշներ։ Նույնը կարելի է ասել նաև խեցեղենի վերաբերյալ։ Գտնված նյութերի մեջ տեղական ջնարակված խեցեղենի (աղ. III, 1, 2) կողքին նկատելի քանակ են կազմում Սամառայից (խալիֆաթի մայրաքաղաքը IX դարում) ներմուծված անոթները՝ կաթնավուն ֆոնի վրա կոբալտով արված զարդերով։ Շատ են խոհանոցային անոթները՝ տարբեր սափորներ, կարասներ, քթիկավոր ճրագներ և այլն (աղ. IV, 3, 4)։ Համեմատաբար քիչ են մետաղից պատրաստված առարկաները (աղ. II, 4, 5, 10, 16—20)։

Ծավալուն աշխատանքներ են կատարված ստորին բերդի արևմտյան մասում։ Այստեղ շարունակվում է պեղվել պայմանական առևտրաարհեստավորական թաղամաս անվանված հատվածի չորրորդ շինությունը։ Վերջինս տարածքով մոտ 300 քառ. մ է, որը միջնորմներով բաժանված է փոքր սենյակների։ Սրանք իրենց նշանակությամբ երկու տիպի են՝ բնակելի և տնտեսական, բոլորը՝ օջախներով և թոնիրներով։ Մեծ թոնիրները օգտագործվել են նաև խեցեղենի թրծման համար. այդ հատվածներում հայտնաբերվել է խոտանված խեցեղեն։ Սենյակների հիմնական պատերի հիմքերը շարված են գետաքարերով, իսկ վերին մասերը՝ հում աղյուսով։ Միջնորմները նույնպես հում աղյուսից են կամ

[3] Կարո Ղաֆադարյան, Արամ Քալանթարյան, Դվինի 1975—76 թթ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 2, էջ 100, տախտ. I_3)։

[4] К. А. Костанян, А. А. Калантарян, Следы стекольного производства в раннесредневековом Двине («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4, էջ 166—174)։

ուղղակի կավե շաղախով են արված։ Սենյակնե-րը միմյանց հետ միացված են փոքր մուտքերով։ Ողջ թաղամասում շինությունները նույնատիպ են, որը, հավանաբար, պայմանավորված է տեղան-քի դիրքով։ Ամրոցի թեք լանջը վերածվել է խան-



Աղյուսակ I։

դակների, և ստորին տների հարթ տանիքները եղել են վերին տների բակերը։ Լույս ստացել են երդիկներից, որոնք, որպես կանոն, բացվել են օջախների և թոնիրների վերևում։ Այստեղ քա-ղաքում, հազարաշեն տներ չեն եղել։ Վերջին-ներս հանդիպում են Դվինի քաղաքային մասի մյուս հատվածներում և միջնաբերդի համեմա-տաբար հարթ տարածքում։ Շինության արևել-յան կողմում սկսվում է երկրորդ խանդակը, որի հատակը նախորդից բարձր է մոտ 1,7 մ։ Նը-կատվում են ձևափոխություններ. տեղ-տեղ հա-տակները կրկնակի ու եռակի բարձրացվել են։



Աղյուսակ II։

Դվինի գոյության վերջին շրջանը հարուստ է քաղաքական իրադարձություններով։ Հայտնի է, որ քաղաքը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցել՝ տիրող էմիրների և հայ-վրացական քաղաքին մեծ հարված են հասցրել Ջալալ-էդ-Դինի և մոնղոլական արշավանքները։ Այս ամենը հստակ արտացոլված է պեղումների ժամանակ ստորին բերդում բացված շինություններում։



Աղյուսակ III։

միացյալ ուժերի ընդհարումների պատճառով։ Դվինն իր վերջին ծաղկումն է ապրել XIII դ. առաջին տասնամյակներում՝ Զաքարյանների օրոք։ Նույն դարի 20—30-ական թվականներին Ամենուրեք նկատելի են ավերածության հետքեր։ Շակայն այն տեսակետը, թե Դվինը դադարել է գոյություն ունենալ անմիջապես մոնղոլների արշավանքներից հետո, քիչ հավանական է։ Ճար-

տարապետական մնացորդները և հնաբանական նյութերը ցույց են տալիս, որ քաղաքում կյանքը շարունակվել է էս մի քանի տասնամյակ և, ըստ երևույթին, այն պատմական ասպարեզից դուրս է եկել XIII դարի 50—60-ական թվականներին։ Գտնվել են դրամներ, որոնցից մեկը պատկանում է վրաց Դավիթ Ուլու թագավորին՝ կտրված 1247 թ. հետո։

Ստորին բերդում հայտնաբերված նյութերը հատուկ են XII դ. երկրորդ կեսի և XIII դ. առաջին տասնամյակների մշակույթին։ Դրանք հիմնականում կրկնում են նախորդ տարիներից հայտնի ձևերը։ Ջնարակած խեցեղենն ընդգրկ են դեղնավուն, կապտավուն և կանաչ դույները, փորագիր երկրաչափական պարզ զարդերը։ Բազմագույն շնարակած անոթները աչքի են ընկնում դույնի մեղմությամբ։ Կան կենդանակերպ և մարդակերպ զարդերով թասերի բեկորներ, մի երևույթ, որը շատ սակավ է հանդիպում Դվինում։ Մասսայական են խոհանոցային խեցեղենի գյուտերը (աղ. IV, 2, 3, 4), որոնց մեջ առանձնանում են կարմիր փայլեցրած հիանալի սափորները (աղ. IV, 5)։ Ապակի գրեթե չկա, մետաղ իրերը հիմնականում երկաթե աշխատանքային գործիքներն են (աղ. II, 1—3, 6—9, 11—15)։

Նյութերի մանրամասն քննությունը և ճարտարապետական հուշարձանների մնացորդները բերում են այն համոզման, որ քաղաքի այս հատվածում բնակվել են միջին կարողության տեր առևտրաարհեստավարական խավեր, որոնք ունեցել են իրենց արհեստանոցները և տեղում էլ կազմակերպել են արտադրություն ու վաճառք։ Թաղամասում բացված յուրաքանչյուր շինություն ունի իր արտադրական հարկաբամիները։ Այստեղ գտնվել են նաև բազմաթիվ դրամներ՝ առանձին և փոքր դանձերի ձևով։

Ստորին բերդի հարավային մասում, անմիջապես մեծ աշտարակներից մեկին կից տարածքում, 1962—1963 թթ. բացվել էր մի մեծ աշտարակ՝ մոտ 38,7 մ պարագծով, և պարսպի մի հատվածն։ 1977 թ. արշավախումբը որոշեց աշտարակի ներսի հատվածում սկսել պեղումներ՝ զարգելու համար պարսպի և աշտարակի կապը ներքին կից կառույցների հետ։ Բացի այդ, նպատակ էր հետապնդվում լայն տարածքում կատարել շերտագրական կտրվածքներ՝ տարբեր դարաշրջանների մշակույթի հիմնական դծերը վերհանելու համար։

Պեղումների ընթացքում ի հայտ է եկել XII—XIII դդ. մի շինություն, որի առանցքը կազմում է երկար միշանցքը՝ երկու կողմերում տեղադրված ոչ մեծ սենյակներով։ Բացի այդ, նկատելի են այլ շինությունների հետքեր, որոնք պեղման ընթացքի մեջ են։ Կառուցողական առանձնահատկություններով և շինարարական տեխնիկայով այստեղ դրեթե նույն պատկերն է, ինչ որ ստորին բերդի արևմտյան հատվածում։ Նկատելի որոշ տարբերություններ դալիս են տեղում ապրած բնակիչների սոցիալական վիճակից։ Դադգացվում է նաև հնագիտական նյութից. ավելի հասարակ են օգտագործվող կավե ամանները, քիչ է խոտանը։ Իհարկե, այս տեսակետը հիմնվում է առանձին տարիների արդյունքների վրա և հետագայում կարող են դրա մեջ որոշ ճշգրտումներ մտցվել։

Տնտեսական և բնակելի սենյակները նույնպես հարթ տանիքներ են ունեցել, շատ են փոքր տրամագծով թոնիրներ, որոնք օգտագործվել են զուտ խոհանոցային նպատակով։ Վերին շերտերում նկատելի են հրդեհի հետքեր, իսկ անմիջապես հատակի վրա՝ մոխրաշերտեր։ Կատարվել են մի շարք վերակառուցումներ՝ տարբեր շինանյութերով։

Պարսպի և աշտարակի վրա դտյացած հնագիտական շերտը դալիս է ասելու, որ վերջին ավերածությունները հետո միջնաբերդի պարիսպը փորցրել է իր դերը։ Այստեղ շատ ավելի հատակ է նկատվում XIII դ. կեսերի մշակույթի առկայությունը, հատկապես՝ խեցեղեն նյութերում։

Շինության սենյակներից մեկում 1982 թ. հայտնաբերվել է ապակի և շնարակած ու հասարակ խեցեղեն (աղ. I, 3, III, 6)։ Նյութերը աչքի չեն ընկնում իրենց ճաշակով. բավականին վատն է շնարակը։ Ինչ նպատակով են պահեստավորվել այդ նյութերը, հայտնի չէ։ Կարելի է ենթադրել, որ դա եղել է փոքրիկ կուղպակ՝ տարասեռ նյութերի վաճառքի համար։ Ջանգվածային հասարակ խեցեղենի մեջ երբեմն հանդիպում են կարմրափայլ հիանալի անոթներ (աղ. IV, 1)։

X—XI դդ. շինությունների մի մասը կառուցված է տուֆե սրբատաշ մեծ քարերով, որոնք անշուշտ բերված են ուրիշ շինություններից, հավանաբար, 893 թ. երկրաշարժից հետո։ Նյութերը լրիվ տարբերվում են իրենց մշակումով և հատկապես՝ շնարակով։ Ջնարակած անոթները պատրաստված են մեծ հմտությամբ. ամենավաղ տիպերը անգորով նկարազարդված անոթներն են, որոնք հանդիպում են բազմագույն նկարազարդված խեցեղենի հետ միասին։ Սակայն վերջիններս տարբերվում են IX դ. շնարակած անոթներից, փոխվում է շնարակի որակը։ Սկսած XI դարից երևան է դալիս թույլ փորագրությամբ բազմագույն շնարակով խեցեղենը։

Այս հատվածի ամենամեծ հայտնությունը դիպսե սվաղով կրաշաղախ մեծ պատն է, որն

---

5 Կարո Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, Երևան, 1982, էջ 68, 109—110։

արդեն պեղվում է 4 տարի և բացվել է մոտ 45 մ երկայնքով։ Տեղի մանրադնին շերտագրական քննությունը ցույց է տալիս, որ այդ պատը մոնումենտալ ինչ-որ շինության է պատկանել և, անշուշտ, կառուցվել է VII դ. ոչ ուշ, իսկ XI դարում արդեն փլատակների մեջ էր։ Կարելի է ենթադրել, որ այն կառուցվել է սասանյանների վերջին շրջանում, դուցե և արաբ ոստիկանների նախնական շինարարական գործունեության ընթացքում և ավերվել է սելջուկների առաջին արշավանքների ժամանակ՝ XI դ. 60-ական թվականներին։ Քանի որ դեռևս պարզված չեն կառույցի սահմանները, դժվար է խոսել նրա ֆունկցիոնալ նշանակության մասին։

1981—1982 թթ. պեղվեց այդ շինության ներքին տարածքից մի հատված, մոտ 2 մ խորությամբ, որի հետևանքով պարզվել է պատի հաստությունը՝ 2.5 մ։ Այս մեծ շինության հարավային պատի վրա, այն ավերվելուց հետո, կառուցվել է ներկայիս մեծ աշտարակը և պարսպի մի մասը։ Բացվել է աշտարակի ներսի կիսակլոր մի հատված, որն անմիջապես դրված է կրաշաղախ պատի վրա։ Այստեղից կարելի է ենթադրել, որ սելջուկները, քաղաքը գրավելուց հետո, ավերված հին պարսպի տեղում կատարել են որոշ ձևափոխություններ, որը նկատվում էր դեռևս 1962—1963 թթ. աշխատանքների ժամանակ։ Պատի արտաքին երեսը բացելիս խրամատից

Աղյուսակ IV։

գտնվել են IX դ. ապակի, խեցեղեն, որոնք իրենց ձևերով կրկնում են կենտրոնական Թաղամասի՝ մինչև երկրաշարժը կառուցված շինությունների նյութերը։

Երկարատև ընդմիջումից հետո պեղման աշխատանքները վերսկսվեցին բլրի գագաթում։ Այստեղ 1961—1963 թթ. բացվել էր Արշակունիների դահլիճը և V—VII դդ. ճարտարապետական ու արտադրական հետաքրքիր կառույցներ6, Բացի այդ, որոշ նյութեր կապվում էին քաղաքի հելլենիստական շրջանի մշակույթի հետ։ Սակայն այդ աշխատանքները ինչ-որ չափով թերի էին մնացել։ 1981—1982 թթ. պեղումների ժամանակ նպատակ է հետապնդվել պարզություն մտցնել դահլիճի շրջակա տարածքի հուշարձանների մեջ և կատարել շերտագրական ճշգրտումներ։ Այդ նպատակով պալատից հյուսիս պեղվեց մոտ 200 քառ. մ տարածք։ Պալատից 5 մ հեռավորության վրա բացվեց մի շինության հատված՝ զույգ խարիսխներով, որը թվագրվում է V—VI դդ.։ Պատը հում աղյուսից է, հաստակը՝ ամուր կավից։ Հյուսիսահայաց կողմը գտնվում է XI—XII դդ. թվագրվող հզոր պատի տակ։ Խարիսխներն ունեն քառակուսի վերնասալեր և տրամավորված կողեր, որոնք հիշեցնում են դահլիճի միակ խարսխի և կաթողիկե եկեղեցու V դ. որմնախարիսխների ձևերը։ Երկու շինությունների միջև ընկած տարածքում բացվել են վերին շերտերից եկող մի քանի հոր, որոնցից մեկում գտնվեց XI դ. շատ հետաքրքիր շնարակած խեցեղեն (աղ. III, 3—5)։

Անմիջապես այս շերտերի տակ բացվում է մոտ 1,5 մ հաստությամբ հելլենիստական շերտը՝ խեցեղենի հարուստ հավաքածուով և շինությունների պատերի մնացորդներով։ Այս մասում նախորդ տարիներին գտնվել էին տորաձև զույգ խարիսխներ։ Պատերը շարվել են ճեղքված սպիտակ ավազաքարով, սակայն կան քառակուսի մեծ սալեր, որոնք լավ հղկված են և, անշուշտ, վերցված կարևոր նշանակություն ունեցող ինչ-որ շինությունից։ Ստուգումները ցույց են տալիս, որ զատերի մեծ մասը անմիջապես մտնում է դահլիճի հյուսիսային պատի տակ։ Շինությունների հատակագծային ամբողջական պատկերը կազմելու համար անհրաժեշտություն է ծագում հեռացնել որոշ վաղ միջնադարյան շերտեր, որը, ըստ երևույթին, կիրագործվի դրանց մանրազնին ուսումնասիրությունից հետո։

Շերտագրական որոշ ճշգրտումներ կատարվեցին նաև դահլիճի ներսում։ Մինչև այժմ մեզ հայտնի էր, որ դահլիճն ուներ կրաշաղախ հիանալի հատակ՝ մանր գետաքարերով հիմքի վրա։ Այդ շինությունը, որ իրավամբ համարվում է Դվինի միջնադարյան ամենավաղ կառույցներից մեկը, Արշակունիների շինարարական գործունեության արդյունք է (IV դար)։ Սակայն պարզվում է, որ դահլիճը ունեցել է կրաշաղախին նախորդող երկու հատակ, որոնցից ստորինը հավանաբար արվել է IV դ. 30-ական թվականներին՝ Եռաբով Բ թագավորի օրոք։ Դժվար է այժմ վերականգնել հետագա վերանորոգումների ժամանակագրական պատկերը, սակայն մի բան պարզ է, որ դահլիճը իր դերը շարունակել է նաև մարզպանության առաջին շրջանում։ VI դարում այն արդեն կորցրել է իր նշանակությունը, և նրա տեղում եղել են ֆունկցիոնալ այլ նշանակությամբ հարկադրաժիններ, որոնցից մեկում գտնվում էր Դվինի դիվանը7, որի մասին վկայում են նաև կավե կնքադրոշմների դյուտերը8։

Դվինը բազմաշերտ հուշարձան է. տալ հուշարձանի շերտագրական պատկերը, որոշակի գժվարությունների հետ է կապվում։ Այդուհանդերձ, արշավախումբը այս առումով մեծ գործ է կատարել, որով լրացրել է նախորդ շրջանում կատարված աշխատանքները։ Շերտագրական պատկերի մեջ պարզություն մտցնելը դյուրացնում է տարբեր դարաշրջանների նյութական մշակույթի, սոցիալ-տնտեսական շատ ու շատ հարցերի ըմբռնումը։ Դվինի վաղ շրջանի շերտագրությունը ներկայացրել է Կ. Քուշնարյովան։

Մ. թ. ա. VIII դ. Դվինը ենթարկվել է ավերածության։ Ողջ բլուրը և կենտրոնական թաղամասը ծածկված է հրդեհի հետևանքով առաջացած հաստ մոխրաշերտով, որը, հավանաբար, կարող էր առաջանալ միայն ուրարտացիների տիրապետության հաստատման շրջանում, երբ Արարատյան դաշտի գրեթե բոլոր բնակավայրերը նվաճվեցին արտաքին արշավանքների հետևանքով։ Շուրջ վեց հարյուրամյակ Դվինի բնակավայրը բնակեցված չէր։ Մ. թ. ա. II դարի սկզբում Արտաշատի հետ միասին Դվինում կյանքը նորից աշխուժանում է, որը տևում է մինչև մ. թ. I դարը, Կորբուլոնի արշավանքները։ Ամբողջ հարցն այն է, որ Դվինի անտիկ

6 Կարո Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 67—70։

7 «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 67—68։

8 Կարո Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 128—134։ А. А. Калантарян, Раннесредневековые буллы Двина, Ереван, 1982.

9 К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977.

շերտոր վաղ միջնադարյանից նույնպես սահմանազատված է հրդեհի շերտով։ Այսպիսով՝ երկու հրդեհների մեջ կա մի միջանկյալ շերտ, որը թվագրվում է մ. թ. ա. II—մ. թ. I դդ. և տատանվում է 1—1,5 մ հաստությամբ։ Կան ուրիշ տեղյալներ ևս, որոնք հստակ սահմանազատում են անտիկ և վաղ միջնադարյան շերտերը։ Դրանք շինարարության ժամանակ առաջացած թափոններն են։ Այսպես՝ IV դարի վերջում կենտրոնական թաղամասում, եռանավ տաճարի շրջակայքում, առաջացել է սպիտակ ավազաքարի մի հոծ զանգված, որը կապվում է եկեղեցու կառուցման հետ։ Այդ շերտի տակից է, որ դուրս են գալիս հելլենիստական շրջանի կարասային թաղումներ։

Վաղ միջնադարյան շերտերը հստակ դիտվում են կենտրոնական թաղամասում՝ եկեղեցիների և պալատների տարածքում, ինչպես նաև միջնաբերդում բացված գահարահի և բակ կոչված հատվածներում։ Կենտրոնական թաղամասում այդ շերտերը սահմանազծված են շինությունների հատակներով և շինարարական թափոնների լցքերով։ Այսպես՝ հայտնի են կաթողիկոսարանի առաջին շինության կառուցման և ավերման ստույգ թվականները՝ 470-ական թվականներ և 572 թ.։ Շերտերի թվագրությունը երբեմն կատարվում է տասնամյակներով։ Նյութը հիմնականում խեցեղեն է, ոչ մասսայական՝ անոթների, զրանց պակների, կանթերի և զարդերի տիպիկ ձևերով։ Ապակին փորագիր է, առավելապես կլոր բլթակներով։ Նետասլաքները եռանիստ են՝ բնորոշ V—VII դդ. մշակույթին։

Լավ է ներկայացված IX դարը, հատկապես կենտրոնական թաղամասում։ Այստեղ 893 թ. երկրաշարժի ժամանակ ավերված շինությունները հստակ սահմանազատում են IX դ. հաջորդ դարաշրջանից։ Շերտի թվագրության համար մեծ դեր են խաղում արաբական դրամները, ինչպես նաև տեղական և մերձավորարևելյան չնարակած խեցեղենը։ Չնարակած խեցեղենը եռագույն է, նկարազարդ բուսական և երկրաչափական հետաքրքիր զարդամոտիվներով։ IX դարի մշակույթին բնորոշ է նաև ապակեգործական արհեստի բարձր մակարդակը։

Վերջին տարիներին միջնաբերդի հարավային բուրգի շրջանում պեղվել էր X դ. մի ստերիլ շերտ։ Դա շատ կարևոր էր հասկանալու համար նյութական մշակույթի մեջ տեղի ունեցող հետագա առաջընթացը։ Քանի որ Դվինը չնարակած խեցեղենի արտադրության խոշոր կենտրոն էր, իսկ չնարակած խեցեղենը հանդես է գալիս որպես շերտի թվագրության հիմնական միջոցներից մեկը, այս առումով հետաքրքիր է պարզել X դարի խեցեղենի առանձնահատկությունները։ IX դարի նկարազարդ խեցեղենին X դարում փոխարինում է նկար-անգրով խեցեղենը՝ տարբեր երանգներով։ Այս տեխնիկան լայն կիրառություն է ստանում նաև ողջ Անդրկովկասում (Օրեն-կալա, Ռուսթավի և այլն)։ Սակայն հարևան հանրապետություններում ուսումնասիրողները այն թվագրում են ավելի վաղ ժամանակաշրջանով։ Թվում է ժամանակագրության այս խառնաշփոթությունը գալիս է շերտերի ոչ հիմնավոր վերլուծությունից, քանի որ ողջ Արևելքի համար (Միջին Ասիա, Միջագետք, Առաջավոր Ասիա) նկատելի է խեցեղենի զարգացման միևնույն օրինաչափությունը։ XI դարից չնարակած խեցեղենի մեջ մուտք է գործում փորագրման տեխնիկան և զարդարման բազմաձևությունը։ Սկզբնական շրջանի կանաչ և դեղին պարզունակ վարդյակազարդերին փոխարինում է բազմագույն խեցեղենը՝ արստրահման հասցրած զարդերով։ Այս տեխնիկան առավել ևս զարգանում է XII դարում։

Հիմնովին ուսումնասիրված է Դվինի գյուղյան վերջին հարյուրամյակի մշակույթը։ Պեղվում է մի ամբողջ թաղամաս, որն իր բնույթով առևտրաարհեստավորական է և ձևավորվել է XII դ. կեսերին։ Այդ շրջանում է, որ Դվինում բարձր ծաղկման է հասնում ապրանքային արտադրությունը։ Խեցեղենի միատարրությունը խոսում է նրա շուկայական լայն սպառման համար արտադրության օգտին, և այստեղ է, որ կարելի է տալ քաղաքի զարգացման սոցիալական պատկերը։ Այս հատվածի պեղումները մեծ հետաքրքրություն են ներկայացնում քաղաքաշինության և միջնադարյան բնակելի աներ ի ճարտարապետական հարցերի ուսումնասիրության առումով։

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ